

**Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան  
Հանրապետական դպրոցական առարկայական օլիմպիադա**

**Աշխարհագրություն**

**12-րդ դասարան**

**Տարբերակ 1**

1. Հաշվել Գրենլանդիա կղզու մակերեսը 1:20 000 000 մասշտաբի քարտեզի վրա: ----- **1 բալ**
2. Գետի ծախսը 100մ<sup>3</sup>/վ է, հունի լայնությունը՝ 2մ, խորությունը՝ 5մ: Որոշել գետի հոսքի արագությունը: ----- **1 բալ**
3. Ջրի աղիությունը 34 ‰ է: Որքա՞ն աղ կարելի է ստանալ 0,5 տ ջրից: ----- **1 բալ**
4. Հյուսիսային կիսագնդում օվկիանոսային հոսանքները ո՞ր ուղղությամբ են շեղվում և ինչու՞: ---- **1 բալ**
5. Տրված երկու վայրերից որտե՞ղ է գոլորշունակությունը ավելի բարձր, եթե առաջին վայրում խոնավացման գործակիցը 1.4 է, իսկ տեղումների քանակը՝ 840 մմ: Երկրորդ վայրում՝ համատասխանաբար 1.6 և 980 մմ: ----- **1 բալ**
6. Օդի հարաբերական խոնավությունը 30 % է, իսկ բացարձակ խոնավությունը՝ 3.3 գ: Որքա՞ն ջրային գոլորշի է անհրաժեշտ տվյալ ջերմաստիճանում օդը հագեցնելու համար: ----- **1 բալ**
7. 2 հա մակերեսով հողակտորի վրա թափվել է 18 000մ<sup>3</sup> մթնոլորտային տեղում: Քանի՞ միլիմետր տեղում է թափվել հողակտորի վրա: ----- **1 բալ**
8. Քաղաքում բնակչության թիվը թիվը 300 հզ. է բնական աճի գործակիցը 0.3 ‰, ներգաղթը՝ 2500 մարդ, արտագաղթը՝ 7500 մարդ: Որքա՞ն կլինի քաղաքի բնակչության թիվը մեկ տարի հետո: ----- **1 բալ**
9. Որոշել երկրի ուրբանիզացման մակարդակը և աստիճանը, եթե գյուղական բնակչությունը 5.3 մլն է մարդ է, իսկ քաղաքային բնակչությունը՝ 7.7 մլն մարդ: ----- **1 բալ**
10. Առաջին երկրում գետային տրանսպորտով տեղափոխվում է 6.7 մլն տ բեռ, իսկ երկրորդ երկրում 11 մլն տ բեռ: Ո՞ր երկրում է բեռների փոխադրման միջին հեռավորությունը ավելի մեծ, եթե առաջինում բեռնաշրջանառությունը կազմում է 940 մլն տ/կմ, իսկ երկրորդում՝ 1.4 մլրդ տ/կմ: ----- **1 բալ**
11. Հետևյալ աշխարհագրական անուններից կազմել համապատասխան գույգեր ----- **1 բալ**  
Եվրոպա, Կալաբրիա, Ասիա, Սոմալի, Յամալ, Աֆրիկա, Ալյասկա, Հյուսիսային Ամերիկա
12. 39 մլն և 17 մլն հա գյուղատնտեսական հողահանդակներ ունեցող երկու երկրներից որի՞ բնակչության թիվն է ավելի մեծ, եթե առաջինում մեկ բնակչին ընկնում է 28 հա գյուղատնտեսական հանդակ, իսկ երկրորդում՝ 16 հա: ----- **1 բալ**
13. Դուրս գրել ջրաէներգետիկ ռեսուրսներով չորս առավել հարուստ երկրները. ----- **1 բալ**  
Տաջիկստան, Նորվեգիա, Թուրքմենստան, Դանիա, Ռուսաստան, Բրազիլիա, Իրան, Ալժիր, Քուվեյթ
14. Դասավորել ջրամբարները հարավից հյուսիս հաջորդականությամբ----- **1 բալ**  
Ապարանի, Սպանդարյանի, Ազատի, Կեչուտի
15. Դասավորել լեռնագագաթները ըստ բարձրության նվազող հաջորդականությամբ /բարձրից ցածր/  
Արարատ, Նեմրութ, Թոնդրակ, Արագած ----- **1 բալ**
16. Հետևյալ աշխարհագրական անուններից կազմել փոխկապակցած գույգեր ----- **1 բալ**  
Կեչուտ, Ախուրյան, Արփի լիճ, Արփա, Տոլորս, Քասաղ, Որոտան, Ապարան

17. ՀՀ վարելահողերը ամենաընդարձակ տարածքն են զբաղեցնում ..... դաշտում, ..... դաշտում և ..... ավազանում:

18. Կառուցել ՀՀ գյուղատնտեսական հողահանդակների շրջանաձև գծապատկերը: ----- 1 բալ


19. Դուրս գրել քարտեզի վրա նշված օբյեկտները ----- 1 բալ

1/ Սարահարթ - -----, 2/ Ջրամբար - -----, 3/ Հանքավայր - -----, 4/ Գետ - -----



20. Դուրս գրել քարտեզի վրա նշված օբյեկտները ----- 1 բալ

1/ Թերակղզի - -----, 2/ Ծով - -----, 3/ Պետություն - -----, 4/ Կղզի - -----



**Շիրակի Ս. Նալբանդյանի անվան պետական համալսարան**  
**Հանրապետական դպրոցական առարկայական օլիմպիադա**  
**Աշխարհագրություն**  
**12-րդ դասարան**

**Տարբերակ 2**

1. Հաշվել Ավստրալիայի մակերեսը 1:20 000 000 մասշտաբի քարտեզի վրա: ----- **1 բալ**
2. Գետի ծախսը 100մ<sup>3</sup>/վ է, հոսքի արագությունը՝ 10 մ/վ: Որոշել հունի կենդանի կտրվածքի մակերեսը:
3. Ջրի աղիությունը 43 ‰ է: Որքա՞ն աղ կարելի է ստանալ 1մ<sup>3</sup> ջրից: ----- **1 բալ**
4. Հարավային կիսագնդում օվկիանոսային հոսանքները ո՞ր ուղղությամբ են շեղվում և ինչու՞: ----- **1 բալ**
5. Տրված երկու վայր. որոնցից առաջինում խոնավացման գործակիցը 1.1 է, իսկ երկրորդում 0.2: Գոլորշականությունը առաջին վայրում 600մմ է, իսկ երկրորդում՝ 950 մմ: Որոշել՝ որ վայրում է թափվող տեղումների քանակը շատ: ----- **1 բալ**
6. Որոշել օդի հարաբերական խոնավությունը, եթե բացարձակ խոնավությունը 12 գ է, իսկ օդը հագեցնելու համար /նույն ջերմաստիճանում/ անհրաժեշտ է 24 գ ջրային գոլորշի ----- **1 բալ**
7. 3 հա մակերեսով հողակտորի վրա թափվել է 27 000մ<sup>3</sup> մթնայլորտային տեղում: Քանի՞ միլիմետր տեղում է թափվել հողակտորի վրա: ----- **1 բալ**
8. Քաղաքում բնակչության թիվը 360 հզ. է բնական աճի գործակիցը 1.7 % , ներգաղթը՝ 6300 մարդ, արտագաղթը՝ 2 500 մարդ: Որքա՞ն կլինի քաղաքի բնակչության թիվը մեկ տարի հետո: ----- **1 բալ**
9. Որոշել երկրի ուրբանիզացման մակարդակը և աստիճանը, եթե բնակչության ընդհանուր թիվը՝ 17 մլ մարդ է, իսկ գյուղական բնակչության թիվը՝ 8.5 մլն մարդ: ----- **1 բալ**
10. Առաջին երկրում երկաթուղային տրանսպորտով տեղափոխվում է 7.7 մլն տ բեռ, իսկ երկրորդ երկրում 12 մլն տ բեռ: Ո՞ր երկրում է բեռների փոխադրման միջին հեռավորությունը ավելի մեծ, եթե առաջինում բեռնաշրջանառությունը կազմում է 950 մլն տ/կմ, իսկ երկրորդում՝ 1.5 մլրդ տ/կմ: --- **1 բալ**
11. Դուրս գրել այն բառը, որը չի համապատասխանում բառաշարքի սկզբունքին ----- **1 բալ**  
Արալյան, Բայկալ, Իսսիկ-Կուլ, Նյասա, Տանգանիկա
12. 50 մլն և 28 մլն հա գյուղատնտեսական հողահանդակներ ունեցող երկու երկրներից որի՞ բնակչության թիվն է ավելի մեծ, եթե առաջինում մեկ բնակչին ընկնում է 30 հա գյուղատնտեսական հանդակ, իսկ երկրորդում՝ 18 հա: ----- **1 բալ**
13. Դուրս գրել առավել զարգացած գետային տրանսպորտ ունեցող չորս երկրները. ----- **1 բալ**  
Լիբերիա, Իրան, Գերմանիա, Ճապոնիա, Նիդերլանդներ, ԱՄՆ, Ռուսաստան, Նորվեգիա, Իտալիա
14. Հանքային աղբյուրները դասավորել հարավից հյուսիս հերթականությամբ. ----- **1 բալ**  
Արզնու, Հանքավանի, Դիլիջանի, Ջերմուկի
15. Խմբավորել լեռներն ըստ կառուցվածքի. ----- **1 բալ**  
Բազումի, Սիփանի, Ուրծի, Ջավախքի, Գեղամա, Փամբակի, Վայքի, Վարդենիսի
16. Հետևյալ աշխարհագրական անուններից կազմել փոխկապակցած գույգեր----- **1 բալ**

Կեչուտ, Ախուրյան, Արփի լիճ, Արփա, Տոլորս, Քասաղ, Որոտան, Ապարան

17. ՀՀ ամենտարածվածը ..... լանդշաֆտային գոտին է, որը կազմված է ..... և ..... լանդշաֆտային ենթագոտիներից՝ ընդգրկելով 1 300 մ բարձրությունից մինչև ..... բարձրությունները ----- 1 բալ

18. Կառուցել ՀՀ բնակչության ազգային կազմի շրջանաձև գծապատկերը ----- 1 բալ


19. Դուրս գրել քարտեզի վրա նշված օբյեկտները ----- 1 բալ

1/ Սարահարթ - -----, 2/ Ջրամբար - -----, 3/ Հանքավայր - -----, 4/ Գետ - -----



20. Դուրս գրել քարտեզի վրա նշված օբյեկտները ----- 1 բալ

1/ Կղզի - -----, 2/ Պետություն - -----, 3/ Նեղուց - -----, 4/ Ծովածոց - -----




Օլիմպիադայի հարցերի պատասխաններ

Տարբերակ 1

XII դասարան

1. 55 սմ<sup>2</sup>
2. 10 մ/վ
3. 17000 գ կամ 17 կգ
4. Կորիոլիսի ուժի ազդեցության պատճառով օվկիանոսային հոսանքները հյուսիսային կիսագնդում շեղվում են դեպի աջ:
5. **I (600 մմ) < II (612.5 մմ), II երկիր**
6. 11 գ
7. 900 մմ
8. 295090 մարդ
9. 59,2 %, 1.45
10. **I (140.3 կմ) > II (127.3), I երկիր**
11. Եվրոպա – Կալաբրիա  
Ասիա – Յամալ  
Աֆրիկա – Սոմալի  
Հյուսիսային Ամերիկա – Ալյասկա
12. **I (1 392 857 մարդ) > II (1 062 500 մարդ), I երկիր**
13. Տաջիկստան, Նորվեգիա, Ռուսաստան, Բրազիլիա,
14. Սպանոստանի, Կեչուտի, Ազատի, Ապարանի
15. Արարատ, Արագած, Թոնդրակ, Նեմրուժ,
16. Կեչուտ, -Արփա,  
Արփի լիճ- Ախուրյան,  
Տոլորս-Որոտան,  
Ապարան-Քասաղ:
17. Արարատյան, Շիրակի, Սևանի
- 18.



19. Աշոցքի, Ապարանի, Սոտք, Փամբակ,
20. Բրետան, Ադրիատիկ, Բելգիա, Սարդինյա